առ ձեռն պատրաստականութիւն զօրավիգն լինել նմա՝ որով և բերելին կարք իմ. բայց ցայսօր անպատասխանի մնալս իմ արկանէ զիս յանել խորխորատ տարակուսանաց։

Առ այժմ պարապելով բարւոք ևս մշակութեան ճառի ինչ՝ խօսեցելոյ յինէն ի հանդիսի պրօֆեսսորաց համալսարանիս զդպրութենէ Հայոց, գուցէ ընդհուպ յաջողեցայց ի լոյս արձանացուցանել զայն ի ռուս լեզու, նուիրմամբ վեհափառ կաթուղիկոսի մերոյ. մռեալ է սիրտ իմ. թէև ըսկսանիմ արիական հոգւով, այլ պաղեալ եռանդեանն ի կես ասպարիսին՝ գօսացուցանէ զճիգն իմ և նահանջէ զյաջողութեամբ կատարածն, ուստի սկզբունք անթիւք և անհամարք, իսկ վախճան և ոչ մի.

Հանդերձ ողջունիւ իմոյ ցաւած ամուսնոյ առ հայրդ իմ և բարեկամ

Կամ և մնամ

Ձեր հարազատ

Ս. Նազարեանց։

ՄԻ ԴԱՇՆ

Կամաւ Հօր և հաճութեամբ Որդւոյ, և յօժարութեամբ Սրբոյ Հոգւոյն, մեք ի Թիֆլիզ եղեալ, երկուց թեմից սրբոյ եկեղեցեաց գործակալքս և Աւագ Քահանայքս, ի մի սիրտ և ի մի հոգի եղեալ. զայս թուղթս միաբանութեան եդաք, ի միջի մերում դաշինս կռելով առաջի Աստուծոյ, և ամենայն սրբոց նորա, զի յայսմհետէ լիցուք ամենեքեան միաբան և միախորհուրդ, և ըստ ամենայնի կապեալ ի կողմանէ կանոնաց, և խորհրդոց սրբոյ եկեղեցւոյ մերոյ։ Եւ որ ինչ հասի և չհասի քննութիւն և հարցումն իցէ, ամենայն միաբան քահանայ պարտ է ազդել Աւագ քահանային իւրոյ, և Աւագ քահանայն յայտնել ժողովոյս մերում, և մեք հանդերձ Առաջնորդովք մերովք, ըստ կանոնաց քննեալ վերահասու լիցուք, և յայնժամ որ ինչ վճիռ ելցէ, ի ժողովոյս մերմէ, այնպէս պարտին առնել։ Նաև՝ ի ձեռնադրել քահանայի

ուրուք եթէ քաղաքական իցէ, նոյնպէս ժողովեսցուք առ սրբազան Առաջնորդն և վերահասու լիցուք, եթէ՝ պատկանաւոր իցէ ձեռնադրելոյն, ըստ վարուցն, ըստ գիտութեանն և ըստ ժառանգաւորութեանն, և մեք լիցուք համաձայն ընդ Առաջնորդացն մերոց։ Ապա թէ անպատկանաւոր իցէ, մի տացուք թոյլ ձեռնադրել զայնպիսին, և մի ոք ի մէնջ կարողասցի, յատկապէս և ինքնագլուխ հարցողաց զպատասխան և զճանապարհ իմն տալ մարդահաճութեամբ և կամ կաշառաւ և կամ ծածկաբար, մի՛ իշխեսցէ ոք ի մէնջ յաղագս ապօրինաւորութեան միջնորդ և բարեխօս լինիլ առ Առաջնորդսն, եթէ ոք յանդգնեալ շեղիցէ յայսմ կանոնէ և միաբանութենէ մերմէ, այնպիսին ընդ տուժիւք եղիցի, այսինքն ըստ հոգւոյ զրկեսցի ի քահանայական յաստիճանէ իւրմէ. . . . Քահանայն և գործակալքն ևս անկցին ի պատուոցն իւրեանց, և ըստ մարմնոյ Լ. . . . սրբոյ Աթոռոցն տացէ և ԺԲ թուման տուգանս օրհնեալ Արքային։ Իսկ ձեռնադրելի քահանայն, եթէ գիւղական իցէ, նոյնպէս մինչև ի գիւղականաց իւրոց և ժողովրդոց իւրոց, զհաւատարիմ վկայսն և զինդրանաց թուղթս ոչ ունիցի ի ձեռն և զայն մի՝ ձեռնադրեսցէ Առաջնորդն։ Նաև եթէ՝ յայսմանէ օրինապահութենէ մերմէ վնաս ինչ ելցէ, ի տուժան և ի պատիժ, յամենայնի եղիցուք, ի մի կապեալ և հաղորդ իրերացս։ Գրեցաւ և կնքեցաւ հաճութեամբ մերով, ի ՌՄԽԳ թուոյն մերոյ, և ի յունվարի Բ-ինն։

Մայրաքաղաքիս Առաջնորդ և Նուիրակ Մարտիրոս Արքեպիսկոպոս. հաճեալ ընդ միաբանութեան թղթոյս համաձայնելով հաստատեալ կնքեմ.

Գերահռչակ սրբոյ վանից Հաղբատայ Առաջնորդ Դաւիթ Արքեպիսկոպոս հաճեալ ընդ միաբանութեան թղթոյս համաձայնելով հաստատեալ կնքեմ.

Գնիք—ստորագրութիւնք 9 քահանայից.